

ԿԱՐԾԻՔ

Ալեքսանդր Սերգեի Կոչուբակի «Բնական իրավունքի հայեցակարգային մոտեցումների էվոլյուցիան. պատմական և արդիական տեսանկյուններ» վերտառությամբ ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսության վերաբերյալ

Ալեքսանդր Սերգեի Կոչուբակի «Բնական իրավունքի հայեցակարգային մոտեցումների էվոլյուցիան. պատմական և արդիական տեսանկյուններ» վերտառությամբ ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսության թեման արդիական է, այն նվիրված է ներկայումս համամարդկային նշանակության այնպիսի առանցքային խնդիրների՝ ինչպիսիք են բնական իրավունքի ծագումնաբանության, այդ տեսության ազդեցությունը հայ իրավաբաղաքական մտքի ձևավորման վրա, իրավաբանական լիբերտարիզմը որպես բնական և պոզիտիվ իրավունքի հակասականության հաղթահարման տեսական հայեցակարգ, բնական իրավունքի հիմնադրույթների փոխակերպումը Հայաստանի Հանրապետության պոզիտիվ իրավունքում և այլն: Ընտրված թեման և դրա շրջանակում հեղինակի կողմից առանձնացված հարցադրումները ինչպես տեսական, այնպես էլ իրավաստեղծ և իրավակիրառ հարթությամբ արդիական են, ինչի առնչությամբ հեղինակը շարադրել է արժեքավոր հիմնավորումներ:

Ընդհանրապես, այսպիսի հիմնարար տեսաիրավական թեմա ընտրելը և դրանք նաև քրիստոնեության ուսմունքի համատեքստում դիտարկելը պահանջում է որոշակի գիտական համարձակություն և պատասխանատվություն, քանզի այս պարագայում ընդհանուր հետազոտական մեթոդաբանությունն ու չափանիշներն ինքնին ի գորու չեն երաշխավորելու անհրաժեշտ ստեղծագործական արդյունավետություն, և այս ամենի հաշվառմամբ Ալեքսանդր Կոչուբակի ատենախոսությունը կարելի է համարել միանշանակ հաջողված: Գիտական համարձակության, թերևս, ամենաբնական ցուցիչն

այն է, որ հեղինակը չի խորշել բնական իրավունքի ծագումնաբանության ակունքներում դնել Աստվածային հենքը: Ընդհանրապես, հետազոտության շրջանակում հետաքրքիր անդրադարձ է արվել բնական իրավունքի և քրիստոնեական ուսմունքի փոխհարաբերակցության հարթությամբ: Ընդ որում, հեղինակը փորձել է ոչ թե ղեկավարվել կրոնական դոգմաներով, այլ հնարավորինս գիտական մեթոդաբանությամբ հետազոտել նյութը և առաջադրել համարժեք հիմնավորումներ: Ընդ որում, ինքն էլ է եզրահանգումներից մեկում խոստովանում, որ, «Բնական իրավունքները (և առհասարակ պետությունը և իրավունքը) ստեղծված են Աստծո կողմից: Սակայն գիտության տեսանկյունից առկա է բարդություն բնական իրավունքների ծագումը Բարձրյալի հետ կապելու և այդպիսի տեսակետը հիմնավորելու հարցում, քանի որ առկա է խնդիր Աստծո գոյության ձևերի և Աստծո արտահայտման հիմնավորման հետ»:

Հեղինակը, ի թիվս այլնի, թեմայի արդիականությունը, մասամբ՝ նաև հրատապությունը դիտարկել է հետևյալ տեսանկյունից. «... բնական իրավունքի մասին պատկերացումների իրավափիլիսոփայական և կրոնադոգմատիկ համալիր հետազոտությունն է հնարավորություն տալիս ավելի ակներև դարձնել իրավունքի և սոցիալական էվոլյուցիայի միասնականությունը, գիտակցել ներկա ժամանակներում էլ զարգացող իրավական նորմերի, իրավական իդեալների, իրավական ինստիտուտների ձևավորման նախադրյալները»:

Աշխատանքը պատրաստված է գիտական անհրաժեշտ բարեխղճությամբ, այն ինքնուրույն հետազոտության արդյունք է, ինչն ուղեկցվել է ինքնատիպ եզրահանգումներով: Ատենախոսությունում չկան այլոց մտքերն ու դատողությունները, միջազգային զեկույցներում արտացոլված մոտեցումները որևէ կերպ յուրացնելու փաստեր, նյութը շարադրված է հստակ գիտական ու տարընթերցումների տեղիք չսովող ակադեմիական լեզվաոճով: Այլ գիտնականների տեսակետերը վերլուծելիս, այդ թվում՝ դրանց հետ չհամաձայնվելու դեպքերում, հեղինակը դրսևորել է պատշաճ գիտական բարեվարքություն:

Աշխատանքի ձևավորումը ամբողջովին համապատասխանում է ներկայացվող պահանջներին:

Ընդհանուր առմամբ ապահովված է պաշտպանության ներկայացվող դրույթների ինքնատիպությունը, դրանց շարադրանքի պահանջվող հստակությունը, ինչպես նաև ներքին համակարգային կապը:

Հետազոտության համար ընտրվել են մեծ ծավալի և շրջանակի գրականության աղբյուրներ, նորմատիվ փաստաթղթեր, իրավակիրառ և դատական պրակտիկայի նյութեր ու այլ իրավական փաստաթղթեր:

Աշխատության կառուցվածքի առնչությամբ գտնում ենք, որ հեղինակն ընտրել է հիմնավորված ու տրամաբանական կառուցվածք, ինչը հնարավորություն է տվել նախ, անդրադառնալու առավել ընդհանուր և եզրահանգումների համար կարևոր նյութ հանդիսացող հարցադրումների: Թերևս, նշված կառուցվածքն ընտրելիս, հեղինակը գործել է հիպոթետիկ-դեդուկտիվ մեթոդաբանությամբ, քանզի ոչ միայն բխեցրել է եզրահանգումներ, այլև փորձել է դրանք ներկայացնել որոշակի հանդիպակաց ուսումնասիրությամբ: Հարկ է հավելել, որ աշխատանքի կառուցվածքը, ինչպես և թեմային առնչվող հարցադրումների, դրանց շարադրանքի ընտրությունը անթաքույց առանձնանում են զգալի ինքնատիպությամբ:

Հեղինակը արձանագրել է քննարկվող ոլորտներում առկա իրավակարգավորումների որոշ խնդիրները, դրանց առնչվող իրավական հարցադրումները ուսումնասիրության առարկա է դարձրել առկա իրավակարգավորումների կատարելագործման համատեքստում՝ միջազգային չափանիշների հաշվառմամբ և ըստ այդմ՝ բանաձևել է դրանց վերաբերյալ սեփական դիտանկյունից ընդունելի համարժեք լուծումները:

Ատենախոսությունը, դրական գնահատելով հանդերձ, անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ այն զերծ չէ որոշ թերություններից, որոնց առնչությամբ մեր նկատառումները հնարավորինս համակարգված ներկայացնում ենք ստորև.

1. Ըստ պաշտպանության ներկայացվող եզրահանգումներից մեկի. «Բնական իրավունքները չեն կարող ինքնիրացվել, դրանց կենսագործման համար անհրաժեշտ է

պետական կամ վերապետական մակարդակում այդպիսի իրավունքների ճանաչում և վավերացում: Այլապես բնական իրավունքները կմնան հոչակագրային կանխադրույթներ» (էջ 9): Այս եզրահանգումը համարժեք արտացոլված է նաև բուն ատենախոսության տեքստում, այսինքն՝ հեղինակը հստակ պատկերացում ունի, թե ինչպես է հնարավոր հաղթահարել բնական իրավունքի իրավական ամրագրումը երաշխավորելու խնդիրը:

Սկզբունքորեն դեմ չլինելով այս տեսակետի հետ, ուղղակի հարկ է անդրադառնալ այն հարցադրմանը, որ ներկայումս օրենսդրությամբ, հատկապես՝ Սահմանադրությամբ որոշակիորեն արտացոլված են բնական իրավունքի էական բաղադրիչները: Այս առումով, կարծում ենք, ատենախոսությունը առավել ամբողջական ու համալիր կլիներ, եթե անդրադարձ լիներ հետևյալ հարցերին՝ ա) կոնկրետ ո՞ր բաղադրիչներն է նպատակահարմար գնահատել, որպես նորմատիվ ամրագրման նյութ և ի՞նչ չափանիշներով, բ) հանրային խորքային զարգացումներին համընթաց նորմատիվ կարգավորումը ինքնին չի կարող մշտապես անփոփոխ մնալ, որպիսի պայմաններում չի առաջանա՞, արդյոք, խզում բնական իրավունքի կայուն արժեքների և հարափոփոխ իրավական կարգավորումների միջև, գ) եթե ընդունում ենք, որ բնական իրավունքի բովանդակությունը թելադրված է ոչ այնքան մարդկային մտածողությամբ, որքան Աստվածային ծագմամբ, ապա ինչպե՞ս ենք բացատրում վերջինիս արմատական էվոլյուցիան, հատկապես՝ «հին» և «նոր» բնական իրավունքի համատեքստում:

Բացի այդ, «հոչակագրային բնույթ» արտահայտությունը բացասական ընկալում ունի խոցելի իրավաքաղաքական մշակույթում, մինչդեռ՝ հոչակագիրը, անկախ վերջինիս ամրագրման աստիճանից, կայուն ու ժողովրդավարական իրավաքաղաքական մշակույթի պարագայում ինքնին արժեք է:

2. Բնական իրավունքի հստակ բովանդակությունը և բաղադրիչները կանխորոշելու, անգամ նորմատիվ հենքով դրանք երաշխավորելու առնչությամբ հեղինակի դատողություններից բխում է, որ սկզբունքորեն անհրաժեշտ է մշակել ոչ միայն այդ հասկացության հստակ բովանդակությունը, այլև դրա սահմանները: Եվ այս

տեսանկյունից խնդիրներ առաջադրելիս հարկ էր փորձել ոչ միայն բնորոշել բնական իրավունքը զուտ ընդհանրական հարթությամբ, այլև փորձել անդրադառնալ սույն եզրակացության 1-ին կետով արտացոլված վերոհիշյալ հարցերին: Ընդ որում, կարծում ենք, այսպիսի համադրումը առավել կմոտեցնեք այն հարցի պատասխանին, թե որքանո՞վ է հնարավոր ուրվագծել բնական իրավունքի սահմանները: Քանի դեռ հիշյալ համադրմանը համալիր աւդրադարձ չի արվել, թերևս, կարծում ենք, գրեթե անհնար է կանխորոշել այդ մոտեցումների հիմնավորվածությունը:

3. Ընդհանուր առմամբ ատենախոսությամբ համարժեք է հետազոտվել բնական իրավունքի ազդեցությունը՝ հայ իրավաքաղաքական մտքի վրա, սակայն այս խիստ կարևոր ասպեկտը, մեր կարծիքով, ներկայացված է ոչ բավարար համադրմամբ: Մասնավորապես, հեղինակը, անդրադառնալով իրավական մտքի հուշարձաններին և հանրահայտ աղբյուրներին, բացահայտելով դրանց խորքային նշանակությունն ու արժեքը, անմիջականորեն և անհրաժեշտ ծավալով չեն փոխկապակցվել բնական իրավունքի արժեքանության հետ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի 12 գիտական հոդվածներում, որոնք բոլորն էլ հրատարակվել են ՀՀ ԲՈԿ-ի կողմից ընդունելի միջազգային գիտական հանդեսներում:

Ամփոփելով հիշյալ ատենախոսության վերաբերյալ հիշյալ դիտարկումներն ու նկատառումները, գտնում ենք, որ հեղինակը կատարել է ծավալուն և արդյունավետ աշխատանք, այն աչքի է ընկնում ինքնուրույնությամբ և պահանջվող աստիճանի ինքնատիպությամբ: Ատենախոսությունը պատրաստված է ինչպես բովանդակային, այնպես էլ ձևավորման պահանջներին համապատասխան:

Այսպիսով, Ալեքսանդր Սերգեի Կոչուբակի «Բնական իրավունքի հայեցակարգային մոտեցումների էվոլյուցիան. պատմական և արդիական տեսանկյուններ» վերտառությամբ ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսության վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու,

